ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ (ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

ՎԱՐԿ No. 9389-AM

Առաջադրանքի անվանումը: ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ **ՖԻԶԻԿԱՅԻ** ՈԼՈՐՏԻ ԹԵՄԱՏԻԿ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրավեր No. AF EIP IC-2.1-4

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Համաշխարհային Բանկին 22,600,000 եվրոյի չափով ֆինանսավորում ստանալու նպատակով՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Խորհրդատվական ծառայությունները («Ծառայություններ») ներառում են ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ **ՖԻԶԻԿԱՅԻ** ՈԼՈՐՏԻ ԹԵՄԱՏԻԿ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ:

Սույն առաջադրանքի մանրամասն տեխնիկական բնութագիրը կցված է հետաքրքրության հայտերի ներկայացման սույն հրավերին (Հավելված 1):

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը հրավիրում է բոլոր իրավասու անհատ խորհրդատուներին («Խորհրդատուներ») ներկայացնելու իրենց հետաքրքրվածությունը

վերոնշյալ ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն այն մասին, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձառություն ծառայությունները մատուցելու համար: Կարճ ցուցակի չափանիշներն են.

- *Խորհրդատուի ընդհանուր որակավորումը (Բարձրագույն կրթություն ֆիզիկայի ոլորտում, անգլերենի իմացություն):*
- *Խորհրդատուի ընդհանուր փորձառությունը (Նվազագույնը հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ՀՀ բարձրագույն կրթական համակարգին առնչվող աշխատանքային փորձառություն):*
- *Խորհրդատուի հատուկ փորձառությունը (Ծրագրային հայտերի գնահատման փորձ, դրամաշնորհային նմանատիպ ծրագրերի նախագծման և իրականացման փորձառությունը կդիտվի որպես առավելություն, միջազգային կազմակերպություններում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն):*

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Ինքնակենսագրություն/CV/, որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝ անուն, ազգանուն, ծննդյան թիվ, կրթություն, մասնագիտացում, աշխատանքային փորձ:
- Կրթությունը, որակավորումը, աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթեր:

Հետաքրքված Խորհդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային Բանկի՝ Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 (այսուհետ կարգավորումներ) փաստաթղթի 3-րդ բաժնի 3.14, 3.16 և 3.17 պարագրաֆների վրա, որոնցով սահմանվում է Համաշխարհային Բանկի շահերի բախման վերաբերյալ քաղաքականությունը:

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Գնումների Կանոնակարգերի՝ Անհատ Խորհրդատուի ընտրության մեթոդով /IC/:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, աշխատանքային ժամերի ընթացքում՝ 09:00-18:00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր՝ ուղարկելով հետևյալ հասցեին (առձեռն, փոստով կամ էլ. փոստով) մինչև **2023թ. հունվարի 16-ը,** տեղական ժամանակով՝ 14:00:

Դիմումի ձևը կցվում է ստորև:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ

Տնօրեն՝ Գրիշա Հովհաննիսյան
Ս. Վրացյան 73, Երևան 0070, ՀՀ
Հեռ. (+374) 57-56-90 (11)
E-mail: procurement@cfep.am, info@cfep.am
Կայքի հասցե՝ www.cfep.am

«Կրթական ծրագրերի կենտրոն»

ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

«____» _____ 2023 թ.

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ (ԿԲԾ ԼՖ)

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՖԻԶԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ԹԵՄԱՏԻԿ ՓՈՐՁԱԳԵՏԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի հետ ստորագրել է ֆինանսավորման վարկային համաձայնագիր ի աջակցություն Կրթության բարելավում ծրագրի (ԿԲԾ) իրականացմանը: Ծրագիրը հաջողությամբ ավարտվել է 2022 թվականի ապրիլին: Միևնույն ժամանակ, Հայաստանի կառավարությունը դիմել և ստացել է ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (ԼՖ): Պայմանագիրը ստորագրվել է 2022 թվականի հունիսի 9-ին:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ ԿԲԾ-ի հիմնական խնդիրներն են՝ բարելավել տարրական դպրոց մուտք գործող երեխաների դպրոցական պատրաստվածությունը, բարելավել հանրակրթական դպրոցների ֆիզիկական պայմանները, ապահովել դրանցում կրթական ռեսուրսների առկայությունը, ինչպես նաև աջակցել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ապահովելով կրթության որակն ու համապատասխանությունը:

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1: Հանրակրթության որակի բարելավում.

- Ենթաբաղադրիչ 1.1: Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,

• Ենթաբաղադրիչ 1.2: Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը,
• Ենթաբաղադրիչ 1.3: Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում,

• Ենթաբաղադրիչ 1.5: Հանրակրթական դպրոցների վերազինում:

Բաղադրիչ 2: Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:
Բաղադրիչ 3: Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

ԿԲԾ ԼՖ իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գործող «Կրթական Ծրագրերի Կենտրոն» Ծրագրերի Իրականացման Գրասենյակի (ԿԾԿ ԾԻԳ) կողմից: ԿԾԿ ԾԻԳ-ը պատասխանատու է ԼՖ-ով Ծրագրի իրականացման կառավարման, ինչպես նաև գնումների, վճարումների, երաշխիքների կիրառման, մոնիտորինգի և գնահատման համար:

ՆՄՀ իրականացումը մեկնարկել է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում և միտված է խթանել բարձրագույն կրթության բարեփոխումները, ինչպես նաև նպաստել բարձրագույն կրթության համակարգում նորարարությունների և հետազոտական աշխատանքների խրախուսմանը: ՆՄՀ-ի ձևավորումը միտված է հետևյալ խնդիրների իրականացմանը. (ա) աջակցել ինչպես պետական այնպես էլ ոչ պետական բուհերին՝ մշակել և իրականացնել կրթական ծրագրերի և մանկավարժական մեթոդների բարելավմանն ուղղված նորարարական ծրագրեր, (բ) ապահովել ԿՓԵՀ-ի գործառնությունը, (գ) զարգացնել ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավման կարողությունները, (դ) ստեղծել կապեր տնտեսության հետ, (ե) զարգացնել միջազգային համագործակցությունը, (զ) խթանել գիտական հետազոտությունները, (է) մշակել բուհի ռազմավարական ծրագիր՝ ուսանողների ընդգրկմամբ, (ը) զարգացնել բուհերի գիտահետազոտական ենթակառուցվածքները՝ ապահովելով ժամանակակից սարքավորումներով և այլն:

ՆՄՀ-ի իրականացումը շարունակվել է 2015-2022թթ. «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում՝ ընդգրկելով ՆՄՀ առաջին, հավելյալ և երկրորդ հիմնական շրջափուլերը՝ 18

դրամաշնորհային ծրագրերով: Ներկայումս, ԿԲԾ ԼՖ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՆՄՀ-ի իրականացում՝ ավելի շատ բուհերի ԲՏՃՄ ոլորտի (հիմնարար գիտական, տեխնոլոգիական, ինժեներական և մաթեմատիկական) դրամաշնորհներ տրամադրելու նպատակով:

ԿԳՄՍ նախարարությունը, ՆՄՀ Համակարգող խորհրդի և ԿԾԿ ԾԻԳ-ի հետ ձևավորելու են բուհերի կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողով (ՀԳՀ): ՀԳՀ-ը կազմված է լինելու թեմատիկ և ֆունկցիոնալ անհատ խորհրդատուներից: Յուրաքանչյուր հայտ գնահատվելու է երեք անհատ խորհրդատուների կողմից՝ ներառելով մեկ թեմատիկ և երկու ֆունկցիոնալ փորձագետների:

ՀԳՀ-ի կազմում անհատ խորհրդատուի հիմնական գործառույթն է լինելու հայտերի գնահատումը՝ համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկի՝ Հայտի գնահատման ձևաչափի և գնահատման արդյունքների հիման վրա կազմված եզրակացությունները ՆՄՀ ՀԽ-ին ներկայացնելը: ՀԳՀ փորձագետների անհատական եզրակացությունների վրա հիմնվելով՝ Համակարգող խորհուրդը վերջնական որոշում է կայացնում ֆինանսավորման ենթակա ծրագրերի վերաբերյալ:

II. ՆՊԱՏԱԿ

Հայտերի գնահատման հանձնաժողովը (ՀԳՀ) ձևավորվում է տեղական խորհրդատուների (3 խորհրդատու՝ յուրաքանչյուր հայտի գնահատման համար, անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր խորհրդատու կարող է գնահատել մեկից ավելի հայտ) ներգրավմամբ, ովքեր պետք է օժանդակեն ԿԾԿ ԾԻԳ-ին՝ գնահատելու ծրագրային հայտերը՝ համաձայն Հայտերի գնահատման չափանիշների (ՆՄՀ Ղեկավար ձեռնարկի Առդիր 1) և գնահատման արդյունքների հիման վրա եզրակացությունները ներկայացնեն ՆՄՀ ՀԽ-ին: Աշխատանքների այս նկարագրերը սահմանում են ՀԳՀ-ի կազմում ներգրավվելիք թեմատիկ ոլորտի խորհրդատուների աշխատանքի շրջանակը:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ ՊԵՏՔ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ:

1. Իրականացնել դրամաշնորհային ծրագրերի հայտերի գնահատում՝ համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկի (Առդիր 1, Հայտերի գնահատման չափանիշներ): Հայտի գնահատման չափանիշներն ու ենթաչափանիշները նկարագրված են ստորև.

- **Ներկայացրած Ծրագրի համապատասխանությունը ժամանակի մարտահրավերներին, ազգային առաջնահերթություններին և հաստատության ռազմավարական պլանին**: Նախքան ծրագրային հայտի մշակումը, յուրաքանչյուր հաստատություն պետք է որոշի իր առաջնահերթ կարիքները և ծրագրային ուղղությունները: Դրանք պետք է արտահայտված լինեն բուհի ռազմավարական ծրագրում: Ծրագրային հայտերը պետք է՝
    - համահունչ լինեն հաստատության նպատակներին, խնդիրներին և զարգացման ռազմավարական ուղղություններին,
    - համահունչ լինեն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված նպատակներին, խնդիրներին և առաջնահերթություններին,
    - ուղղված լինեն կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականության աջակցելուն,
    - ուղղված լինեն գենդերային հավասարակշռվածության և ներկայացվածության բարելավելուն:
- **Դրամաշնորհային ծրագրի նախատեսված աշխատակազմի որակավորումը և համապատասխանությունը նպատակին: (**Հաստատությունները պետք է հիմնավորեն բավարար կարողությունների և ռեսուրսների առկայությունը ծրագրի հաջող իրականացման համար): Ծրագրային հայտերում պետք է ներկայացվեն աշխատակազմի նախատեսվող անդամները՝ փոխլրացնող որակավորումներով, փորձառությամբ ու հմտություններով և նշելով դրանց կապը ծրագրի հաջող իրականացման և առաջադրված նպատակների իրագործման հետ: Միաժամանակ, ծրագրային հայտում պետք է ներկայացվի աշխատակազմի անդամների իրավասությունների և պարտավորությունների շրջանակը: Դրամաշնորհային հայտով ներկայացված աշխատակազմի անդամների փոփոխություն ծրագրի հաստատումից

հետո առաջին վեց ամիսների ընթացքում չի թույլատրվում՝ բացառությամբ ծրագրի հաստատումից հետո առաջացած անհաղթահարելի օբյեկտիվ հանգամանքների: Աշխատակազմի անդամները ծրագրի իրականացման ընթացքում իրենց հասանելիությունը պետք է հավաստեն հայտի փաթեթում ներկայացված անձնական թերթիկներում: Տարաձայնությունների առկայության պարագայում վերջնական որոշումը կայացնում է ՆՄՀ համակարգող խորհուրդը:

- **Ծրագրի բովանդակությունը.** Հաստատությունները պետք է ներկայացնեն ծրագրի հիմնախնդրի ռազմավարական վերլուծություն և հիմնավորում, ինչպես նաև ծրագրի իրականացման մեթոդաբանությունը: Հայտին կից պետք է ներկայացվի նաև ծրագրի իրականացման պլան, մոնիտորինգի և գնահատման պլան, ինչպես նաև գնումների պլան: Հիմնախնդրի վերլուծությունը պետք է ներառի ոլորտի վիճակագրական տվյալների, առկա միտումների ներկայացում, անդրադարձ այդ խնդրի առնչությամբ առկա այլ ծրագրերին և նախաձեռնություններին, առաջարկվող ծրագրի անհրաժեշտության հիմնավորում՝ նշելով այն բացերը, որոնք չեն հասցեագրվում եղած այլ ծրագրերի և նախաձեռնությունների կողմից: Ծրագրի իրականացման մեթոդաբանությունը պետք է ցույց տա այն իրատեսական և ծախսարդյունավետ քայլերի շարքը, որոնց արդյունքում սահմանված հիմնախնդիրը կլուծվի:
- **Ակնկալվող արդյունքները**: Ծրագրի արդյունքները պետք է համարժեք լինեն նախատեսված ծախսերին: Պետք է նաև ներկայացվի ծրագրի արդյունքների տարածման պլան, ինչը կերաշխավորի ծրագրի ազդեցությունը ինչպես ծրագրի իրականացման ժամանակ, այնպես էլ ծրագրի ավարտից հետո: Արդյունքների տարածման պլանը պետք է ներառի ծրագրի ընթացքում ստեղծված արդյունքների պահպանման հարցը, ինչպես օրինակ ստեղծվող լաբորատորիաների տարեկան պահպանման և ծախսանյութերով պարբերական համալրման հարցերը, հնարավոր համագործակցության շրջանակը և նախատեսվող պայմանագրերը/հուշագրերը, բուհի համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու տեսանկյունից ծրագրի ընթացքում ստեղծված հնարավորությունները և դրանց օգտագործման ուղղություններն ու եղանակները: Այսպիսով, ծրագրային հայտերը պետք է՝

- հիմնավորեն ծրագրի նորարարական բնույթը և ներկայացնեն ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները,
- ներկայացնեն ծրագրի ավարտից հետո ծրագրի ազդեցության շարունակման գործողությունների պլանը,
- ներկայացնեն ծրագրի արդյունքների տարածման պլանը:

- **Ծախսերի արդյունավետությունը** – Հաստատությունները պետք է հիմնավորեն նախահաշվի և ծրագրով նախատեսված գործողությունների համադրելիությունը (Ծախսերի գնահատում և հիմնավորում նախահաշվի բոլոր տեղերի համար): Այլ ենթաչափանիշներ են համաֆինանսավորման չափը և ծրագրով նախատեսված ապրանքների/ծառայությունների/վերապատրաստման պատշաճ և հիմնավորված նախահաշվային արժեքի հաշվարկը: Յուրաքանչյուր ապրանքի/ծառայության/վերապատրաստման համար պետք է հստակ ներկայացվի դրա կապը ծրագրի նպատակի և խնդիրների հետ, ընդ որում, հիմնավորելով ոչ միայն նշված ապրանքի/ծառայության/վերապատրաստման անհրաժեշտությունը, այլ նաև բյուջեում նշված քանակները/ծավալները: Ծախսերի արդյունավետության գնահատման ժամանակ էական դեր ունի նախահաշվային արժեքի իրատեսականության գնահատումը շուկայի ուսումնասիրության հիման վրա, այդ թվում, թե ինչքանով է այդ արժեքը ներառում հնարավոր հարկերը, պարտադիր վճարները և այլ անհրաժեշտ ծախսերը:
- **Գործընկերների որակավորումները և համապատասխանությունը նպատակին (միայն կոնսորցիում ծրագրերի համար)** - Ծրագրային հայտերում պետք է նկարագրվեն գործընկերների փոխլրացնող որակավորումները, փորձառությունն ու հմտությունները և դրանց կապը ծրագրի հաջող իրականացման և առաջադրված նպատակների իրագործման հետ: Միաժամանակ, ծրագրային հայտում պետք է ներկայացվի գործընկերների իրավասությունների և պարտավորությունների շրջանակը:

2. Գնահատի յուրաքանչյուր հայտը՝ համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկի Առդիր 1-ում ներկայացված գնահատման համակարգի:

3. Հավաստիացնի գնահատման գործընթացի ընթացքում որևէ անձնական շահի բացակայությունը՝ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ին գրավոր հավաստիացում ներկայացնելով:
4. Գնահատման գործընթացի ընթացքում «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ներկայացնի հայտատու բուհերից լրացուցիչ տեղեկատվություն/պարզաբանում ներկայացնելու պահանջ:
5. Պատրաստի և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ներկայացնի գնահատման արդյունքները, գրավոր եզրակացություն՝ ներառելով ծրագրային հայտերի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկներ:
6. ՀԳՀ փորձագետը, պետք է ներկա լինի ՆՄՀ Համակարգող խորհրդի այն նիստերին, որոնք կապված են ՆՄՀ շրջանակներում ֆինանսավորման ենթակա ծրագրային հայտերի վերաբերյալ որոշումների կայացմանը և ՆՄՀ Համակարգող խորհրդին ներկայացնի լրացուցիչ մեկնաբանություններ՝ ՀԽ-ի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Յուրաքանչյուր գնահատված հայտի համար խորհրդատուն պետք է ներկայացնի գրավոր եզրակացություն (ներառելով դիտողություններն ու առաջարկությունները՝ կապված հայտի գնահատման յուրաքանչյուր չափանիշի հետ, անհրաժեշտության դեպքում պետք է ներառի գնահատված ծրագրային հայտերի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկներ), ինչպես նաև գնահատման արդյունքների հաշվետվություն պայմանագրի կնքումից հետո չորրորդ շաբաթվա վերջում: